ԹԱՏՐՈՆ

ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ

24 ՄԱՅԻՍ 1878 ՆՈՐ ՇԱՐ. Ա. ՇՐՋԱՆ ԹԻՒ 21

ԿԱՐԴԱԼ ԳՐԵԼ ՍՈՎՐԵԼԷՆ Ի՞ՆՉ Կ'ԵԼՆԷ

— Ո՞րչափ մարդիկ կան որ կարդալ ու գրել չգիտեն և դարձեալ կ'ապրին. կարդալ գրել սովրելէն ի՞նչ կ'ելնէ։

— Այո, կան սակաւաթիւ մարդիկ որ կարդալ ու գրել չգիտնալով հանդերձ գործի տէր եղած են և կ'ապրին, սակայն այս մարդիկը բացառութիւն մ'են, որոնք բաղդին կամ պարագայից բերմամբը հարստութիւն մը գոյացուցած են։ Բայց ասոր փոխարէն ես ո՞րչափ մարդիկ կրնամ ցուցընել որ կարդալ և գրել չգիտնալնուն համար յետին թշուառութեան մէջ կ'ապրին. նոյնպէս ո՞րչափ մարդիկ կրնամ ցոյց տալ որոնք կարդալ ու գրել գիտնալնուն շնորհիւ իրենց ապրուստը կը ճարեն։ Զեղի ամենապարզ և ամեն օր մեր աչքին առջև գտնուող օրինակ մը տամ։ Անշուշտ շատ անգամ Եէնի-Ճամիէն անցած էք. հոն չէ՞ք տեսեր կարգաւ վայտէ նստարաններու վրայ շարուած հասարակաց գրագիրներ, որոնք ասոր տաճկերէն նամակը, անոր տաճկերէն աղերսագիրը, միոյն նամակին վրան, միուսին լրագրին վրան տաճկերէն գրելով իրենց օրապահիկը կը շահին. կան անոնց մէջ այնպիսիներ որոնք բաղմաթիւ ընտանիքներ կ'ապրեցնեն միայն կարդալ գրել գիտնալնուն շնորհիւ։ Եթէ այն խեղճ մարդիկը ժամանակին դպրոց գացած չանք ըրած աշխատած ու սովրած չըլլային, ի՞նչ պիտի ընէին, ի՞նչպէս պի-

տի ապրէին. կամ այն է որ բեռնակիր պիտի ըլլային և ծանր բեռերու տակ արիւն քրտինք թափելով հեծէին, այն ալ ուժ ունեցողը, կամ այն է որ ջուր ծախելով մինչև իրիկուն տաքուն պաղին, արևին անձրևին փողոցները պիտի չափէին։ Ուստի, ա՛լ մեծ անխելքութիւն չէ՞ «կարդալ գրել սովրելէն ի՞նչ կ'ելնէ» ըսելը։

ԱՌԱԿ

ՆԱՊԱՍՏԱԿՔ

Մեզմէ խեղճին նայելով
Կարնանք ապրիլ դոհ սրրտով։

Նապաստակներն օր մը ժողված՝
Խորհուրդ արին, տրրտում տրխուր.
Խորհուրդ՝ ցաւօք լի և անլուր.
Զի սրրտերնին էր շատ երած։ —
«Զունինք, ասաց մէկն ի նոցուն,
«Ոչ մէկ կողմէ պաշտպանութիւն՝
«Մարդիկ շներ, ամեն դաշան,
«Մեր մեռնելուն կը ցանկանան։»
— «Երկինքն, ասաց ծեր մը խրոֆած,
«Երկինքն՝ անդութ է, ասեմ բաց.
«Մեր թշնամիք, շատ զօրաւոր,
«Անոնց դէմ հոլ ենք, փուճ անզօր։»
— «Երկինք, կրկնեց երրորդ մ'իսկոյն,
«Թէ չի խնայեր մեզ խեղճերուն,
«Ինչո՞ւ ուրեմն ա՛լ ապրինք» —
— «Լաւ է մեռնի՛նք կորսըլինք.»
Ասաց առաջին
Մակարդը չարին.
«Երթանք սա մօտ լիճը թափուինք խըղդըլուինք,
«Այսքան երկար չարչարանքէ աղատինք։» —
Ինքն առջևէն պարագըլուխ,
Եաւէն այլք կախդըլուխ,
Կ'երթային լուռ ու մուռ
Խըղդուիլ դէպ 'ի ջուր։ —
Սոցա դալուստն ըղդալնուն պէս,
Ողորմելի դորտք, ի՞նչ տեսնես,
Ամեն կողմէ լեղապատառ
Ընկան ի ջուրըն հնչասպառ։
Զայն տեսնելով մէկ խելացի նապաստակ,
— «Աղբարք, կանչեց, նորէն մեր տեղը դառնանք.
«Ահա մեզմէ վախկոտ խեղճեր ալ տեսանք։» —

ԼԱՖՈՆԹԷՆ



ԿՌՈՒԱՍԷՐ ՏՂԱՆ

Յակոբ կռուաոէր բնաւորութիւնմ'ունէր. իւր դիւղին դպրոցին մէջ ուր ինքը կը յաճախէր, դրեթէ ղինքը սիրող մը չկար։ Ամենուն հետ հակառակութեամբ կը վարուէր։ փոքրիկ պատճառի մը կը նայէր որ կռիւ հանէր ու ծեծ-

կուէր։ Այն կռիւներուն մէջ շատ անդամ վրան դլուխը կը պատռտէր, և որովհետև իւր ծնողքն ալ աղքատ էին՝ սաստիկ կը կշտամբէին զինքը թէ՝ անոր անպիտան վարմունքին, թէ՝ զդեստները պատռտելուն համար։ Ձեռքերն ու երեսն ըսես նէ վէրքերով և սպիներով լեցուն էին։

Իրիկուն մը դպրոցէն տուն դառնալու ատեն իւր ընկերաց հետ դարձեալ կռիւի բռնուեցաւ յանիրաւի. սկսաւ անոնց հետ զարնել զարնուիլ։ Մօտը դտնուող տունէն տիկին մ'ելնելով.

— Ցղայ, ըսաւ, ամօթ չէ՞ քեզի որ այսպէս փողոցին մէջտեղը ընկերներուդ հետ կը ծեծկուիս, դու որ դպրոց կ'երթաս և բարեկիրթ տղայ մ'ըլլալու ես։

— Դուն քու տանդ խառնուէ. դուն ի՞նչ կը խառնուիս մեր կռուին, պատասխանեց Յակոբ կոշտութեամբ։

— Բայց, զաւակս, պատասխանեց տիկինն որ աղնիւ մէկն էր, չե՞ս տեսներ որ ձեռքերդ արիւնոտեր են, վրադ ալ պատռտեր է. ես տեսայ որ ընկերներդ քեզի բան մ'ալ չըրին։

— Հա՛, դո՞ւ ալ անոնց կողմակցութիւն կ'ընես, ցնդած կնիկ, կանչեց Յակոբ, դիտցիր որ շատ ղուրցես նէ տանը դպակիները վար կ'առնեմ։

Տիկինը տեսնելով որ անպիտան ու սրիկայ տղու մը հետ է դործը, ալ ձայն չը հանեց ներս քաշուեցաւ։ Սակայն այն չար տղուն անիրաւ վարմունքէն սաստիկ վիրաւորուելով, հետևեալ առտու տիկինը դնաց դպրոցին տեսչին դանդատեցաւ և եղածը մի առ մի պատմեց։ Յակոբ բոլոր դպրոցին տղայոց առջև խայտառակուելէն ետք, քսան օր դըպրոցին մէջ բանտի դատապարտուեցաւ և և միրդէ ու զբօսանքէ զրկուեցաւ։

Ա.Յ.Լ ԵՒ Ա.Յ.Լ.Բ

Եւրոպայի մէջ 5518 թատրոն կայ։ Նոյն թատրոններուն մէջ դործածուած դերասանաց և նուագածուաց թիւն է 2,157,800 կին և 3,027,000 այր։

Ներկայ ամսոյս 24-26 (Ն. Տ.) երեք օր որսի շուներու համար միջազդային մրցում մը պիտի ըլլայ Ֆրանքֆորթի կենդանաբանական պարտէզին մէջ։

Հունդարիայէն Բարիզի աշխարհահանդէսը ուղարկուած խել մը հեռաբրբրաշարժ բաներուն հետ կայ նաև ահագին տակառ մը։ Այս տակառը որ 150-160 հոդի կ'առնէ մէջը, Հունդարիոյ ՀԷՆ ԱՅԷԼՈՒԹԻՒՆ օր հը կը ներկայացնէ։ Այս տակառին համար ծախք եղած է 10,000 ֆիորին, այսինքն դրեթէ հաղար օսմանեան ոսկի։ Երկաթուղւոյ երեք կառք հարկ եղած է՝ քակուած Բարիզ փոխադրելու համար դայն։

ԿԵՌԱՍ

(Շարունակութիւն դես թիւ 20)

Բարեբաղդաբար թնդանօթները երկայն չտևեցին և պատերազմողներն հեռացան։ Վտանդը դադրելուն պէս բարի դիւղապետը կրակին առաջքն առնելու միջոցներ ձեռք առաւ։ Իւր կինը դունատ և լալագին՝ իւր սենեկին պատուհանը նստած էր և աղերսարկու աչքով երկինք կը նայէր, մինչդեռ Բարոլին իւր մօրը քով ծունր դրած՝ իւր դողդոջուն ձեռքերն Աստուծոյ կը վերցնէր և նոյնպէս ջերմ եռամդով կ'աղօթէր։

Ժամը դրեթէ կէս օրէն ետք երեքն էր, յանկարծ փողոցին դուռը զարկին։ Մայրը պատուհանէն նայեցաւ, և սպայ մը տեսաւ որ տանն առջև կեցած էր։ «Օրհնեա՛լ ըլլայ Աստուած, դոչեց. այս սպան մերիններէն է։» Այն ատեն փոք-

րիկ Քարոլին վաղեց դուռը բանալու, մայրն ալ անոր հետևեցաւ։ «Տէ՛ր Աստուած, դոչեց սպան, որ ձին կապելու ատեն անոնց արցունքն ու դունատութիւնը նշմարեր էր. չա՞տ վախցեր էք. բայց հոգ մի ընէք, վտանգն անցաւ, կրնաք հանգիստ ըլլալ, այլևս վախնալու բան մը չունիք. կրակն ալ դրեթէ մարեցաւ. Պ. գիւղապետը հիմա կուգայ։ Իսկ հիմա, կ՚աղաչեմ ձեզի, ինձ քիչ մը ղովացուցիչ բան մը գտնէիք, կտոր մը հաց և գաւաթ մը ջուր ալ ըլլայ հոգ չէ, եթէ ուրիշ բան չունիք։»

Սպան ներս մտաւ, սուրն անկիւն մը դրաւ և քրտնաթոր ճակատը սրբելով նստաւ։ «Այս անգամ կռիւը տաք եղաւ, ըսաւ, սակայն վառք Աստուծոյ մենք յաղթեցինք։»

Երկինքէն իջած հրեշտակ մը գիւղապետին տունն այնքան ուրախութիւն չը պիտի սփռէր՝ որքան այն սպայն և իւր վստահեցուցիչ խօսքերը։ Մայրը մառանը իջաւ, ուր տակաւին մնացեր էին Հռենոսի հին գինիէն քանի մը շիշ, զոր այնքան խնամքով թաղեր էին աւազին մէջ որ թշնամին չկրցաւ գտնել զանոնք։ Ուստի շուտով մը շիշ մը վեր բերաւ հետն ալ հաճարի հաց, խընդրելով որ իրենց ներողամիտ ըլլայ ասկէ աւելի աղէկ բան մը չունենալնուն համար։» Այս կը բաւէ ինձ, ըսաւ սպան հացը ջարդելով և ախորժանօք ուտելով, այսօր տակաւին հիմա բերանս բան կը դնեմ։»

Փոքրիկ Քարոլին պարտէզ վազեց և իւր սիրելի ծառէն հասունցած կեռասներ ժողվեց, զորս մաքուր յախճապակեայ պնակի մը վրայ դնելով բերաւ։ «Ի՞նչ, կեռա՛ս, դոչեց սպան. այս միջոցին չատ հաղուագիւտ պտուղ մ՚է այդ մանաւանդ այստեղ ուր ամեն բան աւար ու աւեր ըրին։ Ի՞նչ հրաշքով կրցաք պահել զայս։

— Այս կեռասը, պատասխանեց մայրը, չատ պզտիկ ծառ մ՚է, զոր մեր աղջկան ծնած օրը բուրգստանին մէջ տեղը տնկեց ամուսինս։ Այն ծառին առաջին պտուղն է այս։ Որովհետև չատ ցած է և դրեթէ կորսուած է ծաղիկներուն մէջ, թշնամին չատ զբաղած ալ ըլլալով նշմարած ըլլալու չէ։

— Եւ դու այս պտուղներէն կը զրկուիս որ ի՞նձ բերես, սիրելի աղջիկս, դոչեց սպայն Քարոլինի այս ըրածէն գոհացուցեալ։ Ո՛հ, ո՛չ, չեմ կրնար ընդունիլ զանոնք, անոնք քուկդ են. անոնցմէ հատ մ՚առնելը մեղք մը գործել է։

— Մենք երջանիկ ենք զանոնք նուիրելով հայրենեաց վեհանձն պաշտպաններուն, որոնք չեն վարանիր մեզի համար իրենց արիւնը թափելու, պատասխանեց Քարոլին. և այս խօսքին վրայ աչքէն արցունքներ թափեցան։ Կ՚աղաչեմ պարոն, ամենքն ալ առէք։

Այն ատեն այն սիրուն աղջկան դէմ չդնելու համար, սպայն քանի մը կեռաս առաւ և չատ համով դտաւ։ Բայց հաղիւ թէ բերանը դրեր էր որ թմբուկներուն ձայնը գիւղին մէջ դոռաց։ «Ձի հեծնելու հրամանն է, ըսաւ սպայն ոտք ելնելով և սուրը մէջքն անցընելով, երթալու է, վայրկեան մը չեմ կրնար մնալ հոս։»

Բայց և այնպէս գիւղապետին կինը գաւաթ մը գինի ալ լեցուց և ստիպեց որ խմէ, մինչդեռ նորատի աղջիկը փութաց կեռասները ճերմակ թղթի մը մէջ դնել, և չատ աղաչեց որ հետը տանի։ «Օդը չատ տաք է ըսաւ Քարոլին, և այս պտուղները թեթև զովացուցիչ մը կըրնան ըլլալ։

— Բայց չիտակը չեմ գիտեր ուր դընեմ, պատասխանեց սպայն. պարապ դրպան մը չունիմ, բոլոր ունեցածս վըրաս է, և ջորիի մը պէս բեռնաւորուած եմ։

— Է՛հ, ըսաւ Քարոլին, այս ափ մը

կեռասին համար ալ տեղ մը կը դտնուի։ Եւ այնքան շնորհքով և պնդելով աղաչեց, որ սպան դրպանին մէջէն թղթապանակ մը հանեց, բաճկոնակին ներքև կուրծքին վրայ դրաւ, և կեռասը պարպուած դրպանը դրաւ։

— Արդարև, ըսաւ սպան յայտնի յուզմամբ մը, պատերազմի մարդը որուն շատ անգամ առաջին պէտքերն չուզելով կուտան, մեծ ուրախութիւն կ'ղդայ երբեմն այսպէս սիրուն և բարեսէր անձանց պատահելով։ Կը ցաւիմ որ աւելի երկայն ատեն չպիտի կրնամ մնալ հոս։ Շատ կը փափաքէի որ այս սիրուն աղջկան փոքրիկ յիշատակ մը թողուի, սակայն այս միջոցին վրաս բնաւ բան մը չունիմ. ուստի ուրիշ բան մը չեմ կրնար ընել՝ այլ շնորհակալ ըլլալ ձեզ ձեր ըրած սիրուն ընդունելութեան և բարեսիրաբար տուած ուտելիքներնուդ համար։» Յետոյ ձիուն վրայ նստուելով մնաք բարովի նշան մ'ըրաւ ձեռքովը Քարոլինի և մօրը, և սրարշաւ մեկնեցաւ։

Ռապէնհայմ գիւղի բնակիչներուն՝ պատերազմին աղէտներն իրենց երկրէն հեռանալը տեսնելով զգացած ուրախութիւններին շատ քիչ տևեց, վասն զի պատերազմական գործողութիւններն վերջապէս իրենց գիւղերուն մօտեցան։ Արդարև քանի մը շաբաթ ետք, դարձեալ նոյն գիւղին առջև արիւնռուշտ կռիւ մը տեղի ունեցաւ, և գիւղապետին տունն ինչպէս նաև միւս տուները մոխիր դարձան։ Այս յարգելի ընտանիքն ամեն բան կորուսեր էր. այսպիսի պարագաներու մէջ մարդ երջանիկ կը համարի ինքզինքը եթէ ողջ մնայ. գիւղապետը կինը և աղջիկը այն տառապանաց վայրէն հեռացան և հետի մեկնեցան, աչքերնին արտասուալից և ստէպ գլուխնին դարձը նելով նայելու համար վերջին անգամ տակաւին հուր և ծուխ արձակող աւերակներուն վրայ որ երբեմն այնքան խաղաղ էր։

Բոլոր երկիրը թշնամւոյն ձեռքն անցեր էր. բարի գիւղապետը որ ամեն ատեն եռանդուն հայրենասէր մը և հաւատարիմ դտնուած էր իւր իշխանին, յաղթողին վարչութեան ներքև պաշտօն մը ստանալ չէր յուսար։ Ուստի իւր փոքրիկ ընտանիքովը հեռաւոր քաղաք մը դնաց ուր շատ թշուառութիւն կրեցին։ Իշխանն անդամ պարտաւորուեր էր խոյս տալ, և անոնց համար բան մը չէր կրնար ընել։ Գիւղապետը գործ փնտռեց և փաստաբաններուն գրութիւններն օրինակելով՝ քիչ մը բան շահեցաւ. կինն սկսաւ ղգեստներ շինել, և իրենց աղջիկը Քարոլին որ քիչ ատենի մէջ մեծ տաղանդ մը և ընտիր ճաշակ մը ցուցուց ասեղի վերաբերեալ աշխատութեանց մէջ, բոլոր գործունէութեամբը իւր ծնողաց կ'օգնէր։ Այս կերպով այս յարգելի մարդիկը իրենց ապրուստը ճարեցին առանց մէկու մը բեռ ըլլալու։

Տիկին տը Պիւխնէն անուն կոմսուհի մը որ ատենէ մ'ի վեր այն քաղաքը կը բնակէր, զարդուց վերաբերեալ բաներու մասին Քարոլինի և անոր մօրը տաղանդին համար տրուած գովեստները լսելով, անոնց յաճախորդ եղաւ և շատ գործ տուաւ անոնց։ Օր մը այն տիկինը շինծու ծաղիկներով զարդարուած գլխարկ մը պատուիրած ըլլալով, Քարոլին որոշեալ ժամուն առաւ տարաւ զայն։

Սենեկապան կինը չկարենալով զինքն անմիջապէս ներս մոցնել, աղաչեց որ սպասէ մինչև որ տիկին կոմսուհին նախաճաշն ընէ։ «Թերևս քիչ մը սովորականէն աւելի պիտի տևէ, յարեց, վասնզի տիկնոջ այցելութեան եկած են իւր քոյրը՝ ամուսինը հետ և երկու աղջիկները միասին։»

Բայց և այնպէս սենեկապան կինը գլխարկն առաւ և տարաւ տիրուհւոյն ցուցուց։ Քիչ մ'ետք վերադարձաւ և Քարոլինի ըսաւ. «Այն տիկինները շատ

հանեցան դլխարկին, քեզի խօսիլ կ'ուզեն. հետս եկուր։»

Սենեկապան կինը Քարոլինն առնելով պարտէզ տարաւ, ուր կոմսուհին իւր հիւրերով նստած էր ծաղկակամարի մը ներքև. Քարոլին տեսաւ այն երկու օտարական օրիորդները որ տակաւին իւր չինած դլխարկին վրայ կը հիանային։ Անոնց մայրը կոմսուհւոյն քոյրը՝ անոր ձեռագործին լաւ ճաշակին և ընտիր շինուածքին համար շատ գովեստներ տրուաւ, և անոր նման երեք դլխարկներ ևս պատուիրեց իրեն և իւր աղջկանցը համար։

Կոմսուհին բաղում շնորհաւորութիւններ ըրաւ Քարոլինի, յետոյ յարեց. «Այս դլխարկն և անոր վրայ դրուած ծաղիկներն սքանչելի են և վրան հիանալի աշխատութիւն կայ. սակայն ըստ իս եթէ աւելի զարմանալու արժանի բան մը կայ՝ այն ալ այս դեռահաս աղջկան առաքինի վարքն է։» Այն ատեն սկսաւ պատմել ինչ որ գիտէր իւր սիրելի Քարոլինի կացութեան և կրած աղէտից վրայ, այս կերպով կ'անուանէր Քարոլինը, և գովել անոր անխոնջ ջանքը որով կ'աշխատէր իւր յարգելի ծնողաց համար։ Կոմսն և անոր քեռայրը տ'Օլմ գնդապետը խօսակցութեան մէկ մասը լսած ըլլալով՝ ծաղկակամարը մտան։ Գնդապետը դեղեցիկ մարդ մ'էր փայլուն համազգեստ մը հագած վրան շատ մը շքանշաններով։ Հազիւ թէ հասկցաւ խնդիրն ինչ բանի վրայ ըլլալը, Քարոլինի մօտեցաւ և ուշադրութեամբ անոր նայելէ ետք գոչեց. «Տէ՛ր Աստուած, դու Ռէպլէնհայմի գիւղապետին աղջիկը չէ՞ս, ըսէ նայիմ։ Բայց այնչափ մեծցեր ես որ բնաւ չպիտի ճանչնայի քեզ. բայց և այնպէս շատոնց կը ճանչնանք մենք իրար։

Քարոլին սաստիկ զարմացած, աչերը մեծ մեծ բացաւ, այն օտարական պարոնին վրայ յառեց և սկսաւ կարմրիլ։

Բայց պարոնը բարեկամութեամբ անոր ձեռքը բռնելով, իւր կողակցին ներկայացուց ըսելով. «Նայէ, Ամելի, ահա այս այն աղջիկն է որ տասը տարի առաջ, տակաւին տղայ եղած ատենը, զիս մահուանէ աղատեց։»

— Ի՞նչպէս կարելի է այդ, պատասխանեց Քարոլին հետզհետէ զարմանալով։

— Այո, այո օրիորդ, շատ կարելի է. միթէ չէ՞ս յիշեր այն սպան որ օր մը ձեր Ռէպլէնհայմի տունը եկաւ սաստիկ խոնջած, ձենէ զովացուցիչ բան մը խնդրեց և դու անոր քու կեռասդ տուիր։

— Ա՛հ, դո՛ւք էք, պարոն, գոչեց Քարոլին, և իսկոյն դէմքին վրայ ուրախութիւն մը տարածուեցաւ. օրհնեա՛լ ըլլայ Աստուած, տակաւին ողջ էք. բայց չեմ կրնար հասկնալ թէ ես ի՞նչպէս կրցած եմ ձեզ մահուանէ աղատել։

— Անշուշտ դու չես կրնար գիտնալ թէ ի՞նչ կարևոր ծառայութիւն մ'ըրիր ինձ ստիպելով զիս որ քու կեռասդ հետս առնեմ տանիմ. բայց իմ կողակիցս և իմ զաւակներս գիտեն, վասն զի իսկոյն զայն իրենց գրեցի։ Ստուգիւ այս իմ կենացս ամենէն աւելի յիշատակաց արժանի դէպքն է։

— Նաև իմս, ըսաւ անոր կողակիցը, որ ոտք ելաւ և Քարոլինի քով գալով սաստիկ յուզմամբ բաղկացը մէջ սեղմեց։

— Բայց բոլոր այս ամենը գաղտնիք մ'է ամուսնոյս և ինձ համար, ըսաւ տը Պիւլենէն կոմսուհին. շնորհ կ'ընէ՞ք այդ պատմութիւնն ընել մեզ։

— Սիրով պատասխանեց գնդապետը. նաև պատմութիւնն ալ երկար չէ։ Անօթի և ծարաւ կը մեռնէի երբ սանձարձակ հասայ օրիորդին հօրը բնակած տանը առջևը, ճշմարիտը խօսելով հոն քիչ մը հաց և պաղ ջուր մուրալու համար։

Օրիորդը և իւր մայրը ունեցածնին տը-
ուին ինչ որ ընդհանուր թշուառութեան
մէջ երենց պիտոյիցը համար կրնային
պահել։ Բարի Քարոլին իւր ծառին բո-
լոր պտուղները վար առաւ և ինձ տու-
աւ որ ղրկանամ. արդարև շատ ընտիր
կեռաս էր, և թերևս այն երկրին մէջ ան-
կէ ուրիշ կեռաս չկար։ Բայց թշնամին
ժամանակ չթողուց որ ուտեմ, թմբուկը
զարնուեցաւ, հարկ եղաւ իսկոյն ձի
հեծնել։

«Սակայն սիրելի Քարոլինը որ այն ա-
տեն փոքրիկ Քարոլին էր, շատ աղաչեց
որ կեռասին մնացած մասը հետս տա-
նիմ. չէի դիտեր թէ ուր դնէի։ Վեր-
ջապէս գրպանիս մէջը դրի, ուրիշ հա-
նեցի թղթապանակս, զոր բաճկո-
նակիս ներքև կուրծքիս վրայ դրի. յե-
տոյ իմ գնդիս միացայ, և թշնամւոյն
պատահեցանք որ արդէն անդամ մը ետ
մղուած ըլլալով նորէն կուգար մեր վը-
րայ յարձակել։ Զինուորներուս գլուխը
կեցած լաւ կրակ մը ըրած առենիս
դարանի մէջ ինկանք։ Ցանկի մը ետև
ծածկուած թշնամի զինուոր մը հրացա-
նին հարուածն ինձ ուղղեց։ Ստահակն ա-
ղէկ նշան առեր էր. գնտակը ճիշդ
կուրծքիս զարկաւ, բայց ճիշդ հոն ուր
կը գտնուէր թղթապանակս զոր չկրցաւ
ծակել։ Ճշմարիտ, եթէ այն թղթապա-
նակը չըլլար, գնտակը մէկ կողմէս պի-
տի մտնէր միւս կողմէս պիտի ելնէր։
Եւ հիմա ըսէք ինձ, միթէ Աստուծոյ
նախախնամութիւնը չէ՞ որ այս սիրուն
օրիորդին ձեռքով զիս մահուանէ փըր-
կեց։ Առանց Քարոլինի աղաչանաց կե-
ռասները հետս չէի տաներ, բնաւ մտքէս
չպիտի անցնէր թղթապանակը կուրծ-
քիս վրայ դնել, և գնտակն անշուշտ զիս
միւս աշխարհը պիտի ուղարկէր։ Ուստի
սիրելի օրիորդ, քու շնորհիւդ է որ Ա-
մելիս այրի չմնաց և տղայքս չորբացան.
քու շնորհիւդ է որ ես տակաւին հան-
դիստ ընտանեացս ծոցն եմ և կենաց բա-
րիքները կը վայելեմ։»

Ամենքն ալ սաստիկ յուզուած համա-
միտ գտնուեցան դնդապետին ըրած դի-
տողութեանցը, և տիկինը վերստին սեղ-
մեց Քարոլինի ձեռքը զոր չարունակ
իւր ձեռաց մէջ բռնած էր, և արտասու-
ալից աչօք ըսաւ անոր, «Այո, դու
մեր պահապան հրեշտակն եղար, և ա-
մենամեծ աղէտէ մը փրկեցիր մեր ըն-
տանիքը։» Երկու օրիորդներն ալ վազե-
ցին և Քարոլինը գրկեցին, գորովանօք
անոր ձեռքը սեղմեցին, և ստիպեցին
զինքը որ երենց մէջտեղը նստի և նա-
խաճաշին մասնակցի։

«Ամեն անդամ որ կեռաս կ'ուտէինք,
ըսաւ կրտսեր օրիորդը, քու վրադ կը
խօսէինք առանց քեզ ճանչնալու։

— Ո՜հ, ո՜րքան երջանիկ կը համարիմ
զիս, կրկնեց անդրանիկը, որ վերջապէս
կարող կ'ըլլամ ծանօթանալ այն անձին
հետ որ մեր հայրը մեզի պահեց։»

Սակայն դնդապետը ծանր և մտախոհ
կերպարանք մ'առեր էր։ «Ստէպ կ'ելնէք
իմ քաջութիւնս կը գովէք, ըսաւ, իմ
նշանաւոր գործերուս վրայ կը խօսիք։
սակայն տեսէք թ'նչ է մարդը. ի՞նչ կըր-
նայ ընել դէպքերու դէմ. ի՞նչ բան,
գրեթէ ոչինչ բան մը, ափ մը կեռաս
պատճառ եղաւ որ շատոնց ի վեր Ռէ-
պէնհայմ գիւղի գերեզմանոցին մէջ
թաղուած չըլլամ տեղակալի պարզ աս-
տիճանով մը, և իմ տեղս ուրիշ մը դըն-
դապետ պիտի ըլլար իմ դնդիս։ Ուստի
իմ շքանշաններս, աստիճանս և հարստու-
թիւնս կը պարտիմ ափ մը կեռասի, կամ
լաւ ևս Աստուծոյ ձեռաց որ փոքր աղ-
ջիկ մը գործածեց, որպէս զի աղատէ
կեանքն այն մարտիկին՝ զոր յաղթու-
թեան դափնիներով կ'ուղէր պսակել...։
Սիրելի օրիորդ, ուրիշ անդամ երկոսը
կը տեսնուինք. բայց հիմա Պ. կոմսին
հետ պզտիկ գործի մը վրայ խօսելիք

ունենալով, ստիպուած եմ քեզ թողուլ» Եւ երկու պարոնները գացին պարտէզը շրջան մ'ընելու։ Քարոլին պահ մը տիկիններուն քով մնաց, յետոյ մեկնեցաւ։ «Նորէն տեսնուինք» ըսին տիկինները վերստին մեծ սէր և հոգածութիւն ցոյց տալով անոր։

Սակայն գնդապետը տը Պիւխնէն կոմսը պարտէզին ծայրը տարեր էր հետը խօսակցելու համար։ Կոմսին ստացուածոց վերատեսուչը քանի մը ամիսներէ ի վեր մեռած ըլլալով, այն պաշտօնը մէկու մը տրուած չէր։ Շատ մը խնդրարկուներ ներկայացած էին, և կոմսը չէր գիտեր թէ ո՛րն ընտրէ։ Նոյն իսկ այն առաւօտուն շատ խօսեր էին այն գործին վրայ, որ խիստ կարեւոր գործ մը կրնայ համարուիլ հարուստ ընտանիքի մը համար։ Այլ այն պաշտօնը մէկու մը յանձնելու էր, և նոյն օրն ալ պիտի յանձնուէր։

«Հիմա, սիրելիդ իմ կոմս, ըսաւ գընդապետը, պէտք չէ վարանիս այնքան խնդրարկուներու առջև. ահաւասիկ մէկը որ բոլոր միւսներուն պէտք է յաղթէ. պէտք է վերատեսուչ ընես Ռէպէնհայմի նախորդ դիւղապետը։ Հաւատա ինձ, ընդունայն չէ որ Աստուած նոյն իսկ այս առտու այն բարի մարդուն աղջիկը մեզ ուղարկեց և զիս ալ երեկ հոս բերաւ որպէս զի անոր պատահիմ տակաւին պաշտօնը մէկու մը չտրուած։

— Ճշմարիտ է, պատասխանեց կոմսը, այս բարի մարդիկն իրօք արժանի եղան մեր ընտանեաց երախտագիտութեան, և ես համոզուած եմ որ Պ. Էհրէնպէրկ շատ պատուաւոր մարդ մ'է անշուշտ. սակայն այնչափ չեմ ճանչնար զինքը որ այսպիսի կարեւոր պաշտօն մը իրեն յանձնեմ. պէտք է քիչ մը մտածեմ ասոր վրայ...։

(Շարունակելի)

ՎԱՐԱՂ

Վարաղ որսալը միշտ անվտանգ չէ. Վարաղին բերնէն դուրս ցցուած երկու ակռաները սոսկալի զէնքեր են զոր պէտք եղած ատեն շուներուն և որսորդներուն դէմ կը գործածէ։ Վարաղն անտառներուն մէջ կը բնակի և սնունդն է արմատներ և պտուղ։

Հանդիսիս 19րդ թուոյն հանելուկը Ռ-ն կը նշանակէր։

ՀԱՆԵԼՈՒԿ

Թրդջան չեմ՝ բայց թեւեր ունիմ,
Բանական չեմ՝ խելք ալ ունիմ.
Ուտեմ հուր,
Խմեմ ջուր,
Փրսխեմ մուր։

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Կարդալ գրել սովրելեն ի՞նչ կ'ելնէ։ — Առակ։ Նապաստակը։ — Կռուասեր տղան։ — Այլ եւ այլք։ — Կեռաս։ — Վարաղ։ — Հանելուկ։ — Հանելուկի լուծում։

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ց. Ց. ՊԱՐՈՆԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Կ. ԵԱԶՄԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
Բիզա փաշա խան թիւ 3.